

րուան անջրպետը բնականաբար արտաքոյ կարգի երկար է, սակայն նկատելով որ այս երկու անուններն, եւ մանաւանդ ասոնց միացումը բոլորովին հաղուադէպ է, այս պատճառաւ ինձի բնաւ անկարելի չերեւար այն հնարաւորութիւնը՝ թէ Տարարիի քոյլ յիշուած անձը նոյնն է ինչ որ կը յիշու Դրամներու վրայ: Հէյսէմ բ. Բէսսամի հետ մէկտեղ Տարարի կը յիշէ Բէսսամ բ. Իբրահիմ սպարապետ մը: Եթէ վերջինս Հէյսէմի հայրն է, այն ժամանակ Հէյսէմ 132ին տակաւին շատ երիտասարդ եղած ըլլալու է:

Այն դահեկանն, որուն յետսակողմեան երեսի վրայ այս ու անունը կը գլունուի, զրոշմուած է ոչ թէ 192ին, ինչպէս որ Ֆրէն²²⁷ հարցական նշանով յառաջ կը բերէ, այլ 195ին. այս հաւանօրէն կարելի է բացատրել հին կնքոյ գործածութեամբ: Ուստի իմ առաջարկած Ծագիդի ժամանակ Հայաստանի ոստիկաններու աղիւսակը հետեւալն է.

169—170 Խուզէյմա բ. Խաղիմ ատ-Ճեմիմի (Ղազ. Թ. 30):

170ին Իւսուֆ բ. Ռաշիդ ատ-Սուլէմի (Ղազ. Թ. 31):

171—172 Եազիդ բ. Մազեադ բ. Զայիդա աշ-Ճէյրանի (Ղազ. Թ. 32):

172ին Արդալքիրի բ. ստորակարդ
Արդալլահ ալ-Ադալի Ուրէյդալլահ
(Ղազ. Թ. 34): բ. Մահդիի

173ին Սուլէյման? (Ղազ. Թ. 33):

175ին Ֆաղլ բ. Եահեա ալ-Բարմէկի (Ղազ. Թ. 35):

177ին Օմար բ. Էյխոր ալ-Կինանի
ստորակարդ
Արու Սարբահ Ֆաղլ բ. Եա-
Սայիդ բ. Մուսամ-հեա ալ-Բար-
իալիկ ալ-Հառանի մէկիի:
սէյդ աս-Սուլէմի

178ին Արբաս բ. Զէրի ալ-Բեղելի (Ղազ. Թ. 37):

178ին Մուսա բ. Իսա ալ-Հաշիմի (Ղազ. Թ. 38):

179ին Եահեա ալ-Հարաչի (Ղազ. Թ. 39):

179—181 Ահմէդ բ. Եազիդ բ. Ուսէյդ ատ-Սուլէմի (Ղազ. Թ. 40).

181—182 Մայիդ բ. Սէլմ բ. Կուտէյրա ալ-Բահիի (Ղազ. Թ. 36):

182ին (?) Նասր բ. Հաբիբ ալ-Մուհամէդի (Ղազ. Թ. 42):

183ին Ալի բ. Իսա բ. Մահան (Ղազ. Թ. 43):

183—185 Եազիդ բ. Մազեադ աշ-Ճէյրանի (Ղազ. Թ. 44):

184—186 Ասադ բ. Եազիդ բ. Մազեադ:

186—187 Մուհամէդի բ. Եազիդ բ. Մազեադ (Ղազ. Թ. 41):

187—191 Խուզէյմա բ. Խաղիմ ատ-Ճէմիմի (Ղազ. Թ. 45):

192ին Սուլէյման բ. Եազիդ բ. ալ-Ասամ ալ-Ամիրի (Ղազ. Թ. 46):

193ին Արբաս բ. Զոփար ալ-Հիւալի (Ղազ. Թ. 47):

193ին Մուհամէդի բ. Զուհէյլ աղ-Դարբի (Ղազ. Թ. 48):

Ո. ՓԱՍՏԱՐ
ԹԻԳԱՄ. Հ. Վ. ԽՈՎԼԻԶՅԱՆ



ՀՈԼԼՈՆԴԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԵ

ԺԶ—ԺԹ. ԴԱՐԵՐՈՒՄ

(Ըարունակութիւն.)

Է.

Վանանդեցիների աշակերտ՝ Ծրէօդէր
գերմանացի հայագէտը. նրա “Գանձ Արամեան
Լեզուի հեղինակութիւնը: Ծրէօդէրի անտիպ
և Հայ-լատին բառարանը: Ագուլեցւոց բարեա-
ռով մի հին ոտանաւոր: Լակրոզ հայագէտ գաղշ-
ղացին եւ նրա անտիպ “Հայ-լատին բառա-
րանը” Լէյդէնի Մատենադարանում: Լակրոզի
կարծիքը Ծրէօդէրի մասին:

Վանանդեցիք Ամստերդամում հաստա-
տուելով ոչ միայն հայկական տպագրութիւնը
զարգացրին, այլ մասմբ զարկ տուին նաեւ
հայագիտութեան տարածմանն Եւրոպայում:
Հայագիտութեան բարձրացնելու մի քանի եւրո-
պացի նշանաւոր արեւելագէտներին, որոնք մե-

²²⁷ Recensio 1**, Nr. 244:

ծապէս օգտուած են զուկասից: Դրանցից երկուսի գործունէութիւնը կապուած է Ամստերդամի հետ, ուստի եւ աւելորդ չենք համարում առանձնապէս խօսիլ նրանց մասին:

Ծանօթ է Շրէօդէր (Schröder) գերմանացին կամ ինչպէս ինքն է գրում Հայերէն — “Յովշաննէս Սկրոդէրեան” — իր “Գանձ Արամեան Լեզուի վերնագրով, Հայերէն լեզուի ուսումնասիրութեան նուիրուած հմտալից ընդարձակ երկասիրութեամբը: Ծրէօդէր եղաւ, “որ զտելով, լրացնելով եւ ամփոփելով իր նախորդների խառն, անսիստէմ եւ շատ անգամ սխալ տեղեկութիւնները հայ լեզուի եւ գրականութեան մասին, տուեց 1711ին լատին լեզուվ իր “Արամեան Լեզուի գանձը” (էջ XVI + 64 + 410 + 80), իսկապէս մի Հայկական հանրագիտակ-encyclopédie հայ բանասիրութեան: Հայ լեզուի ծագումը եւ զարգացումը (Հարկաւ նոյն ժամանակի գիտութեան համաձայն), Հայկական տպագրութիւնը, Հայոց տաղաշափութիւնը՝ եւրոպական երաժշտական խաղերով, “Գաւանութիւն Հայոց”՝ հայ բնագիրներով եւ լատին թարգմանութեամբ ու մեկնութիւններով, արեւելեան աշխարհաբարի քերականութիւնը եւ նրա լրսուաբանութիւնը կենդանի լեզուի օրինակներով, “Խօսակցութիւններով” ընտանեկան սովորոյթների, գաղափարների եւ կենցաղի մասին, նամակագրութեան օրինակներ եւ վերջապէս հայուլատին բառերի ընդարձակ ցանկեր, — ահա թէ ինչ է պարունակում “Արամեան Լեզուի գանձը”¹:

Ծրէօդէր իր այս հեղինակութիւնը՝ “Thesaurus linguae Armeniacae”, հրատարակած է Ամստերդամում, Հոլլանդական տպարանում, վանանդեցիների տուած Հայերէն տառերը գործածելով: Իր գրքի լատիներէն յառաջաբանում նաև երախտագիտական պարտը է համարում շնորհակալութիւն յայտնել իր Հայերէնի ուսուցիչներին, “Հայ արքեպիսկոպոս Թոմաս Գոլթանեն (Thoma Golthanenii) եւ սրբ եղբօրորդի զուկաս Նուրիջանեանին (Luca Nurigianide)”: Ծրէօդէր գովասանքով է խօսում մանաւանդ զուկասի մասին, որ “նշանաւոր էր բազմաթիւ ասիստական եւ եւրոպական լեզուների հմտութեամբ”²: Կա խօսուվանում է որ “Հայերէնի ուսման մէջ մեծ յառաջադիմութիւն է արել շնորհիւ այս ամենահայտարիմ ուսուցչին:

Զուկասի մասնակցութիւնը “Արամեան Լեզուի գանձում” երեւում է նաեւ նրանից, որ այնտեղ ինքն էլ հետեւեալ ոտանաւորն է զետեղել իրբեւ վերջաբան:

“... Թէեւ յայլոց այս գործ փորձեալ բայց Գանձ սորին գերազանցեալ Զի Հայկական ներկուու եղեալ Զարհեստ տառից ներհուն վարժեալ Քաջդ Յոհաննէս պայծառացեալ Գերմանացւոց փառք ծագեցեալ: Ով ազգ պայծառ բարեօք լրցեալ Ի Փիւնիկեայ զարմէ սերեալ Որ ոչ հեռի Հայոց եղեալ Եւ ոչ միմիանց օտար գլտեալ: Արի զուարթ մեղ մերձեցեալ Որպէս խնամի եւ ազգակցեալ: Այսու գործով օժանդակեալ ԶԱրարատեան գանձը գիտեալ Զի Սկրոդէրեանն զայս ինչ գանձեալ Ի մէջ գանձից Գանձ նոր ցուցեալ Ամենայնիւ սա գանձացեալ Գանձասիրաց յառաջ եղեալ:”

Ծրէօդէրի այս երկասիրութեան “Դաւանութիւն Հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց”, բաժինը Հրատարակուած է վերստին լուգոնում 1780ին, “Թարգմանեցեալ ի Հայկական լեզուէ ի լատին բարբառ ի Յոհաննիս Սկրոդէրեան գերմանացւոց: Եւ արտահանեալ ի “Գանձ Արամեան կոչեցեալ գրդոյն, աշխատութեամբ ջուղայեցի Խալդարեանց Խօջամալի որդոյ Գրիգորի: Խակ այժմ վերստին տպեցեալ ի խնդրոյ Գերապայծառ Տեառն Յովսէփայ Աստուածաբան վարդապետի եւ Առաջնորդի Աշտարիսանու եւ Նոր Նախիջեւանուն:” Արդեամիք եւ ծախիւք նոյնոյ Գրիգորի³:

Ծրէօդէր թողել է նաեւ երկու անտիպ երկասիրութիւն, որոնք հայ-լատին բառարանի նիւթեր են, ինչպէս նկարագրում է պրոֆ. Խաւլթեանց, որ անձամբ տեսելու քննել է դրանք:

“Դրանցից մէկը, գրում է նա “Յուշարձանի”, մէջ, իր վերոյիշեալ յօդուածում, մի գիրք է 332 էջ ու 4⁰, այսպիսի խորագրով, որ

¹ Վերջին էլլ վայ կա մի երկար յաւելուած, որ սկսում է այսպէս. “Եւ ասո ի պարապ անդուզ եղաք սակաւ ինչ բան յաղագս համեստութեան, թարգմանեալ յանդիմացուց:

² Ով ես դու մարդ, որ վատահանաս յիմաստութիւնքո, կամ ընդէր պարձիս ի ստացուածս քո... եւ սիւն ընդ ամէնը 29 առզ: Այս յաւելուածը, երեւի ուղնուեալ նոյնոյ Գրիգորին աշխատութիւնն է....:

Հեղինակներ է պատկանում. "Index vocum in Lexico Armeno-Latino comprehensarum": Այստեղ պատրաստուած են լատիներէն բառերը, որոնց իւրաքանչիւրի դէմ նշանակուած է մի թիւ. այդ ժուկերով որոնելու է նոյն լատին բառի հայերէն նշանակութիւնը միւս գրքում — in F⁰ դիրքով եւ 640 էջով՝ նշանակուած գեղին թղթի վրայ գրուած, ուր այբբենական կարգով դասաւորուած են հայերէն բառերը: Արանից զատ այս մեծադիր թերթերի մէջ զետեղուած են իրեւ մաքուրի առած ու 4⁰ թերթերու — Լատին նշանակութեամբ հայերէն բառեր: — Բառերի դէմ գրուած են համառօտակի՝ որոշ հոլվեր, բայերի դէմ՝ խնդիր սեռի կամ բնութեան եւ առանձին գիտելիք՝ ոճերի մասին. Վկայութիւն՝ թէ որտեղ է պատահում այդ բառը՝ ես չնկատեցի, թէեւ հեղինակը, ինչպէս կը տեսնենք բառարանի ընդարձակ խորագրից, Դիտաւորութիւն ուներ այսպիսի ցուցումներ եւս անել: Ընդհանրապէս այս բառարանը (դեռ անկատար) նոյն տպաւորութիւնն է անում, ինչ որ միւս հայ-լատին բառդրբերը՝ ինչպէս Ռիվոլամբ (1631 թ.) Վիլսմինը (1713 թ.) . . .: Միջադիր 15^{րդ} եւ 16^{րդ} էջերի մէջ կայ մի ու 4⁰ թուղթ, որ լստ երեւոյթին Ծրէօդէրի ապահոյ բառարանի խորագիրն է կրում: "Բառարան հայկօ-լատին. Dictionarium Armeno-Latinum, in quo ex sacris et profanis scriptoribus omnia quae occurserunt vocabula fideliter explicantur, loca auctorum notantur, barbara et exotic a geminis distinguuntur etc. H. S. J. W. Schröder 1757, opera ac studio Joachimi Schroeder . . . ab anno 1706: — Հեղինակը ուրեմն աշխատելիս է եղել այդ գործի վրայ Ճիշտ 50 տարի՝ յօւսալով գուցէ 1757ին տպագրել նրան, ինչպէս նշանակուած է խորագրում, բայց վախճանուեց մի տարի տուաշ՝ առանց իր նպատակին հասնել կարենալու": "Այսուհետեւ Ծրէօդէրը նշանակում է այն գրեանքը, որոնցով օգտուել է նա իր բառանը կազմելիս. "Catalogus librorum qui ad notitiam meam pervenerunt et quorum subsidio atque auctoritate usus sum in hoc libro": Թէ գարում Հռոմ, Պարիս եւ Այլուր ապագրուած կրօնական, Քերականական եւ բառանական բովանդակութեամբ 22 լատին գրքեր մի առ մի նշանակելուց յետոյ Ծրէօդէր մէջ է բերում նոյն գարում լըս տեսած նման բովանդակութեամբ հայ հրատարակութիւն-ները. այստեղ կայ եւ մի ներբող խորենացուն,

ուր Ամնստերդամի հայագէտը՝ ի միջի այլոց, նշանակում է հայ պատմաբանի աղբեկները թուով 32 եւ ապա դնում է հայ մատենագիրների ցանկը՝ Ծրաթանգեղ, Զենոր, Բիւզանդ . . . մինչեւ Առաքել պատմագիրը: Արանից յետոյ՝ մի քանի թերթ մաքուր թողած՝ Ծրէօդէր՝ թուելով Հոլանդիայի Էյժդէն քաղաքի մատենագարանի 17 տպագիր լատին եւ հայ գրքերը . . . յիշում է եւ նոյն մատենագարանի 12 հայ ձեռագրերը¹ . . . Յետոյ գալիս է Վենետիկի բոսժողով տպարանի մինչեւ 1709 թիւը հրատարակած հայ գրքերի ցանկը. ապա Բերլինի արքունական մատենագարանի հայ գրքերի ցուցակը, որը այն ժամանակ շատ աղքատ էր . . . եւ վերջապէս Ծրէօդէր նշանակում է Հռոմի Վատիկանի մատենագարանում իր ժամանակ գտնուած հայ ձեռագիրները . . . Ծրէօդէրի յիշած նիւթերի վերջում կայ եւ այսպիսի մի հետաքրքրական նկատողութիւն. Ծրէթինի Ա. Մարիամ եկեղեցում գտնուած մատենագարանում պահպատմ է մի մեծագիր հայ ձեռագիր՝ ոսկեղծ կողերով, որի ձակատին գրուած է. Ego Cptany Armenorum presbyter, Arrakel vocant me, nomine Jacobus de Grigoriis, veni huic Beroninum et habitavi aliquandiu ut irem ad . . . et multos habens libros non potui eos portare mecum, prae paupertate hunc librum vendidi Sacerdoti (Andrea Musero) 1674 . . .² . . . "Անհամեմատ աւելի հետաքրքրական է Ծրէօդէրի հաւաքած նիւթերի մէջ եւ կարելի է ասել՝ թանկագին մի զիւտ է այժմ մեզ համար — Ազուեցոց բարբառով մի ոտանաւոր, որը գտայ ես Հայկաբանի թղթերի մէջ: Ինչպէս երեւում է նախապէս պատրաստուած է եղել սա «Գանձին» համար եւ սրա մի անհան մասն է, որ լըս տեսաւ այդ աշխատութեան մէջ (էջ 356): Ոտանաւորը, որ «Տուն Գողթան քերթող եւ թարգման վերնագիրն է կրում եւ որը հաղորդած կամ յօրինած պէտք է լինին Ծրէօդէրին շատ բանում օգնող Ամնստերդամի էջմիածնապատկան³ տպարանի կառավարիչ

¹ Էկդէնում այժմ՝ անհամեմատ աւելի մեծ թուով չայերէն գրքեր եւ ձեռագիրներ կան. սրանց մասին պիտի խօսիք առանձին, աշխատութեանն մերժում:

² "Արցեօք առ նոյն Յակոբ գրիգորինց քահանան էն, որ 1676 թուին Լայպցից եր եկել եւ որոշ ծառայութիւններ մասուցել ծանօթ գերմանացի հայագէտ Ակադեմիութիւնը, ծանօթ. Գր. Խալաթեանցի՝ "Յուշարձանում":

³ Այսուղ սէմիածնապատկանն խօսքը իր աեղին էն, որովհետեւ թամաս եպիսկոպոս երբեք չե յայտարարել ոչ մի տեղ, որ եր ապարանն էջմիածնին է պատկանում ընդհակառակը նաև իր կտակով շտան որոշ կերպով հաստատել

Գողթնեցի Թոմաս Եպիսկոպոսը եւ նրա քրոջ
որդի Վանանդեցի Ղուկաս Սուրիջաննեան,
— բաղկացած է 55 տողից . . .¹:

Ըրէօդէրի չափ եթէ ոչ աւելի՝ նշանաւոր
է միւս հայագէտը Լակրոզ (Lacroze)² գաղ-
ղացին, որ բազմաթիւ լուրջ պատմական ու-
սումնասիրութիւններ ունի արեւելագիտութեան
վերաբերեալ: Նա ունի ի մէջ այլոց՝ Histoire
du Christianisme des Indes տպ. Հայագում, 1724ին, որ նրա լաւագոյն աշխատութիւնն է:
Նա ունի նաև Histoire du Christianisme d'Ethiopie et d'Arménie, տպուած նոյնական Հու-
լանդայի մայրաքաղաքում 1739ին եւ դրանցից
զատ նաև բազմաթիւ անտիկ հեղինակու-
թիւններ, մեծ մասը արեւելան լեզուների բառ-
գրքեր, որոնց թւում առաջին տեղն է բռնում
հայ-լատին բառարանը: Լակրոզ խորին հըմ-
տութիւն ունէր հայերէն լեզուի. գեռեւս այն
ժամանակ նա անխնայ քննադատած է Մ. Խորե-
նացու Պատմութիւնն եւ կասկած է յայտնած
քերթողահօր՝ Ե. դարի մատենագիր լինելուն:

Լակրոզի հայերէն բառարանն, որ անտիկ
է մասած եւ որի ձեռագիրն այժմ գտնվում է
Աէյդէնի համալսարանի մատենագրարանում³ 2
հատորից է կազմուած, ծանօթ է իր բոլոր կեն-
սագիրներին, եւ նոյնպէս երկար տարիների աշ-
խատութեան եւ որոնումների արդիւնք է ինչպէս
Ըրէօդէրինը:

Պրոֆ. Ֆր. Մակլէր, որ տեսած եւ քննած
է այս կարեւոր երկասիրութիւնը Աէյդէնի Մա-
տենագրարանում, այսպէս է նկարագրում.

Ա. Հատորի տիտղոսն է Dictionnaire
Armenico-Latinum || summo studio et labore ||

Էթե տպարանն իր անժնականին է պատկանում, որն
եւ ինքը նույրում է “իր սիրեցեալ հսցենիքին”, Էջման-
սին գատկանել է, ճշդագոյնը էջմանին նույրել են Ամ-
ստերդամի անդրանիկ տպարանը՝ Մատթէոս Շարեցու հիմ-
նածն եւ Ասկան Եպիսկոպոսի կառավարածը, ինչպէս պատ-
մեցիք:

1 ԱՅՈՒՀԱՐՁԱՆԻ մէջ ամրողապէս տպուած է (էջ 184) այս հետաքրքրական ոսանաւորը, որ “բարբառագի-
տութեան տեսակէտից մանուանդ կարեւոր էն, ինչպէս
գրում է Խալաթթեանց”:

2 Lacroze կամ բուն անուղղ, Mathurin Veyssiére de la Croze Ծն. Կանա (Ֆրանս.) քաղաքում 1661ին եւ
մեռած Բերլինում 1739ին: Նա մուել էր 1677ին Սոմբուրի
Բենդիկտանների գանքն եւ 1682ին կրօնաւորական կարգն
ընդունել, բայց կամքի մեծաւորի հետ կառելով փախա-
ջուցեցիա, Բալ (Bâle) քաղաքն եւ այնուեղ բողքակա-
նութիւն ընդունեց: Բերլինում, նա նշանակուեց մատենա-
գրանի կառավարիչ եւ մատերական յարաբերութիւններ
ունեցաւ Աէյդէնից հետ:

3 Leiden. 119 Worneri MSS. Orient. N 431 A.

ex sacris biblis variisque Armenorum recen-
tio || ris et veteris aevi libris || elaboratum a ||
Maturino Veyssiére Lacroze, qui et Prae-
fationem addidit, de antiquitate et usu Lin-
guae || Armeniacae || ... Pars prima || Ber-
olini || anno Domini nostri Jesu Christi ||
MDCCXII || Martii XXIII . . .”

“Յառաջաբանը շատ կարեւոր է պատմա-
կան տեսակէտից. հեղինակը հայերէն Աստուած
բառը մէրձեցնում է Astyage, Աստուաշին . . .”

“Բառարանը սկսում է ա. տառի բացա-
տրութեամբ. թարգմանուած առաջին բառն է
աբեղայ = cœnobita, monachus, իսկ վերջինը՝
կցորդիլ = communicare . . .”

“Բ. Հատոր. տիտղոս՝ Lexico armenico-
latinum. Dictionnarii Armenico-latini pars altera.
սկսում է հ. տառով եւ հա բառով եւ
վերջանում է ք. տառով եւ քովը բառով:
611 երորդ էջի տակ դրուած է. “վերջ. finis.
Incoepi X. Mensis Junii A. C. M. DCC. IX.
Absolvi XXII. Januari A. C. M. DCC. XII. Ma-
tutinus Veyssiére La Croze. Berolini . . .”

“ԺԼ. Դար. գրութիւնը բոլորգիր. Թուղթ.
Ա. Հատորը XCIX + 649 էջ եւ 3 սպիտակ
թերթ: Բ. Հատորը՝ 622 էջ եւ բազմաթիւ
պարապ երեսներ գրքի վերջը . . .”

Լակրոզ մեզ առանձնապէս հետաքրքրում
է այն տեսակէտից, որ նա շատ խիստ կերպով է
քննագատում Ըրէօդէրի “Գանձ Արամեան Լե-
զուի”, իր մի մասնաւոր նամակում, որ նա ուշ-
զել է իր հոլանդացի մի բարեկամին: Ամստեր-
դամի համալսարանի Մատենագրարանում պահ-
վում է հոլանդական Deventer քաղաքի գիտ-
նական քաղաքապետ Gijsbert Cuperի ընդար-
ձակ հոլանդերէն նամակը յանուն մի որիշ
գիտնական քաղաքապետի, Nicolas Witsenի,
որ արեւելագէտ էր եւ երկար ճանապարհոր-
դութիւններ է կատարած Մերձաւոր Արեւել-
քում, ի մէջ այլոց նաև Հայաստան, եւ Ամ-
ստերդամի գաւառապետն էր: Նամակը գրուած
է Օքենից եւ կրում է 1712 Օգոստ. 19 թիւթ:
Այնտեղ Cuper խօսում է Լակրոզի մասին, որից
մենք մէջ կը բերենք այն մասերն, որոնք նրա
հայագիտութեանն են վերաբերում.

“... Յիշեալ պարոն Lacroisiusը, գրում
է Cuper, շատ խոր հմտութիւն ունի արեւելան
լեզուների. յօրինած է հայերէն լեզուի բառա-

1 Rapport sur une Mission scientifique en Bel-
gique, Hollande, Danemark et Suède (Juillet-Sept. 1922)
par M. Frederic Macler, Paris 1924, էջ 26-27:

րան, որի մասին ինձ հետեւեալն է զրում: "J'ai achevé mon Dictionnaire arménien, et je l'ai chez moi, relié en deux volumes en grand folio de plus de 3000 pages, avec une préface fait longue: De Antiquitate et usu linguae Armeniacae (ստորագծումը նամակագրին է). J'y ai fait entrer beaucoup d'observations curieuses dont aucunes n'ont jamais été dites par qui que ce soit. Si j'avais été en Hollande, j'aurais porté cette préface avec moi pour la soumettre à votre critique.",

"Լակրոզիուս այս վերջին պարբերութիւնը նրա համար է զրում, որովհետեւ մտադրութիւն ունէր Հոլլանդա գալ եւ ինձ այցելել: Ես ի հարկէ ամենամեծ սիրով կ'ընդունէի այդպիսի մի մեծ գիտնականին":

"Նա ինձ ուրիշ առթիւ էլ գրած է թէ՝ չնորհիւ հայերէնի կարելի է կենդանացնել Մարտաց լեզուն: Այս գիտողութիւնը շատ ճիշտ է թուում ինձ. գրանից կարելի է այն եզրակացութիւնը հանել, որ հայերէնը Մարտաց լեզուի յաջորդը կամ մասցորդն է, որով պէտք է ենթադրել թէ կանխապէս այդ երկիրներում մի ընդհանուր լեզու գոյութիւն ունէր: "

"Ես տեսնում եմ, որ պարսն Sperlingius իր թէ կարդացել է Oleariusի մէջ թէ պարսիկները թռչունի ձեւով գլխատառեր ունին: Չեմ իմանում, Ճիշտ է այս պարսկերէնի մասին թէ ոչ, որովհետեւ ես այդ գլուխ չեմ օգտառել, բայց հաստատ գիտեմ, որ հայերը շատ ճարտար կերպով իրենց գլխատառերին մարդու, օձի եւ նոյնպէս թռչունի ձեւեր են տալիս. այս երեւում է 1709 ին Շրէօդէրի Ամստերդամում տպած Thesaurus Linguae Armenicae պրից, որ ի մէջ այդպիսի 30 գլխատառ կայ: Լակրոզ Շրէօդէրի այս աշխատութեան մասին էլ գրել է ինձ 1711 Մայիս 8ի նամակում եւ հետեւեալ նկատութիւնն է անում: "J'ai enfin reçu le "Trésor de la langue arménienne", de Mr. Schroeder. J'appréhendais, qu'il ne m'eut élevé quelqu'une de mes découvertes, mais je n'avois rien à craindre. Nous marcherons bien cent ans lui et moi sans nous rencontrer. Je ne sais comment il a pu faire pour être si stérile dans une matière si abondante. Je tacherai de mettre au net mes observations sur cette langue; plust à Dieu que je puisse disposer comme lui des caractères arméniens qu'il a eu à sa disposition à Amsterdam. Cela m'engagera peut-être à

faire un voyage, à Hollande vers la fin de cette année si Dieu me conserve la santé...":

(Հոլլանդացի նամակագիրն այնուհետեւ ուրիշ նկելմի մասին է խօսում, որն աւելորդ ենք համարում յառաջ բերել:)

Թէ որչափ իրաւացի էր Լակրոզ իր այս խիստ քննադատութեան մէջ Շրէօդէրի "Գանձ Արամեան Լեզուի", գրքի մասին, չենք կարող դատել քանի որ իր սեպհական թանգարին հեղինակութիւնը — հայ-լատին բառդիրքն, մասնաւոր նրա Յառաջաբանը, գեռ մնում է անտիպ էլյուդէնի մատենադարանում եւ մատչելի չէ բանասէրներին, որոնց համար անհրաժեշտ է նաև ծանօթանալ Լակրոզի յիշած "Բաղմաթիւ հետաքրքրական դիտողութիւններին", հետ: Սակայն տարակոյս չկայ, որ նրա նման լուրջ արեւելագէտը՝ առանց բաւականաշափ հիմք ունենալու չէր գրի այնպիսի ծանրակշիռ նկատողութիւն, ինչպէս է "Je ne sais comment il a pu faire pour être si stérile dans une matière si abondante...":

(Ծարումակութիւն:)

ՍԱՐՈՒԽԱՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՃՈՐՈԽԻ ԱԻՐՁԱՆԵԼ

առ = առուակ: — ւ = լնու: — ււ = լունաշնթայ:

(Ծարումակութիւն:)

և.

Թորդում:

Պարիսի գետի խառնունքից տասը կիումեար արեւելք ձորոխն առաջ զնալով՝ ընկունում է թորդում վտակը, որը սկիզբն է առնում կուշկուշար լրից: Այս լրը է առնուած են Զառեմա, Դումլի, Կազան, Սպիայուած եւ Եպրիչայիր լրից. Եօթն առուակ-Եպլամիլի էլ կորիչայիր լրից. Եօթն առուակ-Եպլամամայն, միեւնոյն բարձրութիւնից ներ միանգամայն, միեւնոյն բարձրութիւնից ներ հեռաւորութիւնից դուրս են զալիս, միա-նում, թորդումի վտակի սկիզբն են կազ-դում: Այդ առուակները իրարից հաղիւ թէ երկուական կիլոմետր հեռուից են բղխում,